«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

«Ամերիա» ընկերությունների խմբի
հասարակության հետ կապերի և հաղորդակցման
խմբի ղեկավար **Էլմիրա Ադամյանին**

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,
հեռ.՝ 077 484-554)

Հարգելի տիկին Ադամյան, Ձեր՝ հարցերին պատասխանելու պատրաստակամությունից ելնելով, ստորև ներկայացնում եմ մեզ հետաքրքրող հիմնական հարցերը: Ակնկալում եմ հնարավորինս սեղմ ժամկետում ստանալ դրանց պատասխանները, որպեսզի պատասխանից բխող ենթադրյալ հարցերի պատասխանները ստանալու ժամկետները չերկարաձգվեն:

1. Ի՞նչ հանգամանքներում և ե՞րբ է Ամերիաբանկը դիմել Աղասի Դանիելյանին վերջինիս առաջարկելով HSBC բանկում ունեցած վարկը վերավարկավորել: Ի՞նչպես է բանկը տեղեկացել, որ Դանիելյանը այլ բանկում վարկ ունի:
2. Ի՞նչ հանգամանքներում և ե՞րբ է Ամերիաբանկը Աղասի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Փափազյան 2/7 հասցեում գտնվող առանձնատունը(հետագայում այն դարձել է Հեղուշ Գալստյանին սեփականությունը) աճուրդի հանել:

2.1 Փափազյան 2/7 հասցեում գտնվող առանձնատունը աճուրդի հանելու որոշման մասին տեղեկացվե՞լ է Աղասի Դանիելյանը և նույն վարկը երաշխավորած այլ անձինք:

2.2 Երբ բանկը դիմել է դատարան՝ պահանջելով Փափազյան 2/7 հասցեում գտնվող առանձնատանն առնչվող վարկային փաթեթով երաշխավոր հանդիսացող անձանցից օգուտ բանկի բռնագանձում կատարել, այդ փուլում բանկի ներկայացուցիչները քննարկումներ ունեցե՞լ են այդ ժամանակ ՀՀ ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցնող անձի՝ Վլադիմիր Գասպարյանի հետ:

3. Բանկը վարկային պարտավորությունները չկատարելու հանգամանքով պայմանավորված արդյ՞ոք երբևէ դիմել է դատարան Հեղուշ Գալստյանից օգուտ բանկի բռնագանձումներ կատարելու պահանջով(Քանի որ Հեղուշ Գալստյանն Աղասի Դանիելյանին պատկանող գույքի գնորդն էր, իսկ առուվաճառքի պայմանագրի հիման վրա ստանձնել էր Աղասի Դանիելյանի վարկային պատավորությունները):
4. Ճի՞շտ է, որ դատարանում բանկին ներկայացրած Արտակ Ավանեսյանը հանդիսանում է ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի անդամ Վարդան Ավանեսյանի որդին: Եթե այո, ապա ձեր կարծիքով շահերի բախում կա՞, թե՞ ոչ:

Տիրայր Մուրադյան

1 օգոստոս 2018 թ.